

«... Այլ եւ աղաչեմ որ զգուշացնես մերինները... որ զբուրեամբ կամ բերանով թող չմեծաբանեն, այլ սիրով ու խաղաղութեամբ վարուիք անոնց (նախկին հակառակորդներուն) հետ. վասնզի մեծ բարիք ծագեցաւ իրենց ըրածէն. թէպէտ Աստուած ըրաւ մեզի այս բարութիւնը, բայց ինչ եւ իցէ, պէտք ենք ներել անոնց. եւ ասով ալ չենք բաւականանար, այլ միշտ աղօթող ենք անոնց համար, որպէսզի ինքն Յիսուս այս կեանքին մէջ զիրենք ամէն տեսակ բարի համբաւներով ու առաքինութիւններով զարդարէ եւ հանդերձեալին մէջ ալ մեծ փառքով»⁵¹:

«Այս բոլորը՝ Աստուած ըրաւ, եւ ոչ մենք, կը գրէ Մխիթար՝ Պոլիս, Հաճի Յարութիւնին, որ յաջողեաց ամէն բան, ոչ միայն բարեկամներու միջոցով, այլ նաեւ մեզ հալածողներու ձեռքով, որ մեզի օգնական եղան իրենց զբուրեմներով... որք ի միում զրոջ գրէին զիմն, եւ ի միւսն զներհակն նորին, եւ այս նոյն անձին ձեռնագիր աներկբայ ստուգութեամբ»⁵²:

«Ով սիրելիներ, մենք տէրունական հրամանին համաձայն՝ չուղեցինք վրէժխնդիր ըլլալ, այլ՝ որքան մեր կարողութեան մէջն էր, ջանացինք պահել անոնց պատիւը. այնքան միայն խօսեցայ, որքան հարկաւոր էր մեզ արդարացնելու զարարութենէ վասն զի մէկու մը չարիքը չեմ ուզեր, նոյն իսկ եթէ աչքս հանեն», կը գրէ Մխիթար:

«Ուստի, ձեզի ալ կ'աղաչեմ, որ սիրով վարուիք անոնց հետ. ես այսքանը ձեզի ի տեղեկութիւն գրեցի, եւ ոչ զանոնք նախատելու. ուրեմն, դուք ալ զանոնք մեզի պէս սիրելու եւ պատուելու էք: Վասն զի ինչ որ, ով որ ալ ըլլայ, մեզի դէմ ըրաւ, չճանչնալով ըրաւ, եւ պարտինք ներել, որովհետեւ չեմ կարծեր որ թշնամութեամբ եւ չար մտքով ըրած ըլլան, այլ՝ սխալելով մեր մասին թիւր իմացան, եւ կը համարէին թէ ես ամէն բան որ կ'ընեմ՝ ինքնազլութիւն եւ Ս. Եկեղեցիէն առանց հրամանի կ'ընեմ: Այնպէս (ինքնազլութիւն) չէր, բայց պատահումը բերաւ՝ որ անոնք այդպէս ծուռ իմանան:

«Ուրիշ պատճառ մըն ալ կայ, կ'եզրակացնէ Մխիթար Աբբա-հայր, զանոնք սիրելու. ինչ որ ալ ըլլայ, ինչ որ մեզի դէմ ըրին, Աստուած մեր օգուտին եւ փառաւորութեան դարձուց. հետեւաբար, նոյն բարիքները յառաջացնողն Աստուած՝ կը պահանջէ որ ներենք անոնց եւ զանոնք սիրենք. եւ այս բաւ է»⁵³:

Հ. ՅԱԿՈԲ ԶԱՆԹԱՅԵԱՆ

ՄԻԽԻԹԱՐ ԱՐԲԱՆՅՐ

ԵՒ ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻՈՅ ՄԻԽԻԹԱՐԵԱՆ ԱՌՔԵԼՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ

(1719-1723)

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Բազմաթիւ թագաւորութեան կործանումէն ու Կիլիկիան թագաւորութեան ջնջումէն ետք՝ Անիէն դադարած շուրջ երեք հարիւր հայ ընտանիքներ, բնակութեան յարմար քաղաքներ կը ստանան Մոլտաւիոյ մէջ, Աղեքսանդր Բարի իշխանին շնորհիւ, ԺԵ. դարու սկիզբը: Եօթը քաղաքներ՝ Սուչաւա, Պոթոլան, Վասլու, Տորու սկիզբը: Եօթը քաղաքներ՝ Սուչաւա, Պոթոլան, Վասլու, Տորու սկիզբը: Եօթը քաղաքներ՝ Սուչաւա, Պոթոլան, Վասլու, Տորու սկիզբը: Եօթը քաղաքներ՝ Սուչաւա, Պոթոլան, Վասլու, Տորու սկիզբը: Եօթը քաղաքներ՝ Սուչաւա, Պոթոլան, Վասլու, Տորու սկիզբը:

Սակայն, երբ 1668ին, Մոլտաւիոյ իշխանութեան դէմ յեղափոխական շարժում կը ստեղծուի, եւ յաջորդ տարին՝ Թուրքերը Լեհաստանի Բոտուլիոյ նահանգին վրայ կը յարձակին, Մոլտաւիոյ Հաստանի Բոտուլիոյ նահանգին վրայ կը յարձակին, Մոլտաւիոյ Հաստանի Բոտուլիոյ նահանգին վրայ կը յարձակին: Շատեր իրենց կեանքն ալ վրայ կու տան, ուրիշներ կը զրկուին իրենց ինչքերէն, իսկ ողջ մնացողները՝ նախատեսելով աւելի դառն օրեր՝ կ'որոշեն հեռանալ երկրէն ու դիմել Կարպատեան լեռներու խաղաղ լանջերուն, գտնելու համար Թրանսիլվանիոյ հիւրընկալ դաւառներուն մէջ՝ կեանքի ապահովութիւն:

Անցնելով սարերու կիրճերէն՝ երեք տարի կը մնան անստոյգ վիճակի մէջ, մինչեւ որ Ափաֆի Ա. Իշխանը Թրանսիլվանիա մնալու արտօնութիւն կու տայ Հայերուն, որոնք կը հրաժարին անգամ մըն ալ Մոլտաւիա վերադառնալու ծրագրէն:

Իմաստուն վարչապետը բաւական հասու ըլլալով Հայերու ձեռնբեկութեան եւ աղնիւ նկարագրին, ինչպէս նաեւ հաստատ հիմերու

51. Հ. Եղիա Վրդ. Վենետիկէն, առ Հաճի Յարութիւն՝ Կ. Պոլիս (1718, Հոկտ. 7):

52. Մխ. Աբ. Վենետիկէն, առ Հաճի Յարութիւն՝ Կ. Պոլիս (1719, Յունուար 22, Նմկ. Թ. 59):

53. Անդ:

վրայ դնելու համար իր երկրին տնտեսական վիճակը, լայնօրէն կը բանայ հիւր ժողովուրդին առջեւ բոլոր դաւաճներու դռները:

Ճուրճով ու Պեսթերցէ կ'ըլլան առաջինները՝ որ Հայերուն բընակութիւն կու տան. կը յաջորդեն Կերլա, Պաշֆալով եւ Սեփիլիզ:

Առաջին շրջանին՝ Հայերը մէկ դատաւորով միայն կը կառավարուէին: Բայց երբ իրենց Եպիսկոպոսին՝ Տէր Օքսենտիոս Վերծարեանի խնդրանքին վրայ հրաման կը ստանան Լէոփոլտ Ա. Կայսրէն յատուկ քաղաք մը հիմնելու, Սամօզ գետին եզերքը կը շինեն Սամօշուվար, այսինքն՝ Կերլա քաղաքը, որ յետոյ Հայաքաղաք, Արմենոպոլիս կը կոչուի. յաջորդաբար, դատաւորէն զատ կ'ունենան տասներկու երդուեալ ծերեր, որոնք կը զբաղին դատաւարական եւ վարչական գործերով: Արձանագրութիւնները կը կատարուէին նախ հայերէն լեզուով, յետոյ մոռնալու աստիճան կորսնցնելով իրենց բնիկ լեզուն, լատիներէն, գերմաներէն հուսկ՝ հունգարերէն:

Կերլայի կառուցումէն ետք, Հայերէն մաս մը Պաշֆալով (Եղիսարէթոպոլիս) կ'անցնին՝ բնակութիւն հաստատելու: Այսպէս, քանի մը տարիէն Պաշֆալովն ալ կը զարգանայ, եւ Կերլայի կողքին՝ արքունական քաղաքներու առանձնաշնորհութեան կ'արժանանայ, բայց նախ Կերլան՝ 1726ին, եւ ապա Պաշֆալով՝ 1738ին: Այդ առանձնաշնորհութիւնները պիտի հաստատուին 1747ին ալ՝ կայսերական հրամանագրով:

* * *

Հ. Մինաս Բժշկեանը կրնանք համարիլ Հունգարահայ գաղութին պատմութեան առաջին տեղեկագիրը, որմէ օգտուած են շատեր մինչեւ այսօր՝ Սակայն Հ. Մինաս իր տեղեկութիւնները քաղած է մի-

1. Հայ եւ օտար հեղինակներ Հունգարահայոց Գաղութի մասին, նիւթիս առընչութեամբ:

ա) Հայ հեղինակներ.

1) Հ. ՄԻՆԱՍԲՎ. ԲԺՇԿԵԱՆՅ, Համապարփադութիւն ի Լեհաստան եւ յայլ կողման քնակելոյս ի հայկազանց սերելոց ի ճախնեաց Անի քաղաքին, Վենետիկ - Ս. Ղազար 1830, էջ 424: 2) Հ. ՂՈՒԿԱՍ ԱԼԻՇԱՆ, Կամեմից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումինոյ, Վենետիկ - Ս. Ղազար 1896, էջ 276: 3) ԳՐԻԳՈՐ Վ. ԳՈՎՐԻԿԵԱՆ, Հայք յԵպիսկոպոսիս Դրամսիւնումիոյ, Վիեննա, Ա. Հտ. (Աղգ. Մատ. Թիւ ԺԱ.) 1893, էջ 533: Բ. Հտ. (Թիւ ԼԳ.) 1899, էջ 558: Գ. Հտ. (Թիւ ԽԹ.) 1904, էջ 658: ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ՝ Դրամսիւնումիոյ Հայոց Մետրապոլիսը, կամ ճկարագիր Կերլայ հայաքաղաքի ի գիր եւ ի պատկերս, Վիեննա (Աղգ. Մատ. Թիւ ԺԹ.) 1896, էջ 352: 4) ԱԼԹՈՒՆԵԱՆ ԱՐՇԱԿ Մ., Տեղեկութիւն Հայոց գաղթականութեան քրք ի Մոլտո-Վալաքիա, Հունգարիա եւ ի Լեհաստան, Ֆոկզան 1877, էջ 164: 5) ԱՐՐԱՀԱՄԵԱՆ ԱՇՈՏ Գ., Համառոտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, Երեւան, Բ. Հտ.

այն բերանացի աղբիւրներէ, այսինքն՝ աւանդութենէ, որ գրաւոր տեղեկութիւններէ զուրկ է: Այսպէս, մինչեւ այսօր, ո՛չ Անիէն մեկնութի թուականը կարելի եղած է որոշել, եւ ոչ ալ Թէ Ինչ Թիւով Հայեր մտած ըլլան Թրանսիլվանիոյ դաւաճները:

Մուկ կը մնայ մանաւանդ դաւանական հարցերու մարդը: Գուցէ Պաշֆալով մեկնող Հայերը՝ անհամաձայնութեան մը հետեւանքով հեռացած են Կերլայէն: Սակայն, չենք կրնար որոշ հաստատել այս կարծիքը: Երբեմն կրօնական տարաձայնութիւնները այնքան սուր հանգամանք առած կը թուին, որ հատուած մը մինչեւ իսկ Մոլտա-ւիա վերադառնալու առաջարկ ըրած է:

Մեր քննութիւնը կը դժուարանայ մանաւանդ պատմական տը-հաներու հաստատ վկայութիւններու պակասէն: Պատմագիրները շատ լուր չեն տար դէպքերու մասին, եւ միայն դիւաններու պրպտումները կրնան քիչ մը լոյս սփռել, ինչ որ ջանացած եմ կատարել ուսումնասիրութեանս ընթացքին²:

Յայտնի է, ուրեմն, որ Միխիթար Արքահայր պիտի հանդիպի նո-րաբոյս գաղութի մը, որ նոր դարաշրջան մը մտած էր, տակաւին կարօտ՝ նիւթական եւ մանաւանդ բարոյական լուրջ օժանդակու-թեան³:

1967, էջ 142-154: 6) ԱԼՊՈՑԱՃԵԱՆ ԱՐՇԱԿ Գ., Պատմութիւն հայ գաղթա-կանութեան, Գահիրէ, Բ. Հտ. 1955, էջ 336, 370, 388, 567, 575, 577:

բ) Օտար հեղինակներ.

- 1) LUKACSI KRISTOF, *Historia Armenorum Transilvaniae, a primordiis gentis usque nostram memoriam e fontibus authenticis et documentis antea ineditis elaborata*, Viennae 1859, pp. 149. ՆՈՅՆԸ, *Adalékok az erdélyi örmények történetéhez* (Ցաւելուած Թրանսիլվանիոյ Հայոց Պատմութեան): 2) DAN D. *Die Orientalischen Armenier in der Bukowina*. (Արեւելեան Հայք ի Պուդոլինա) Հրտ. Գալիւքեարեան Վ. Գրի-գոր, Վիեննա (Աղգ. Մատ. Թիւ Դ.) 1891, էջ 79: 3) SZONGOTT KRISTOF, *Szamosujvár Szabad Királyi Város Monográfiája 1700-1900*. (Կեր-լա արքունական ազատ քաղաքին ժամանակագրութիւնը, չորս հատոր):
2. Ուսումնասիրութեանս համար գլխաւորաբար Ս. Ղազարի վանքին Մայր Դի-ւանի (1719-1723 տարիներու) վաւերացողութիւն օգտուեցանք: Այս նամակ-ներէն հրատարակուած գտանք. 1) Միխիթար Արքահայր հեղինակութեամբ գըր-ուած նամակները, Թիւով 15: Հրատարակութեան տարին 1961: 2) Հ. Ղեւոնդ Ն. Տայեանի կողմէ ՎՄայր Դիւան Միխիթարեանց վեմնուկոյ ի Ս. Ղազար Խո-րագրով երկու նամակներ, հրատարակուած տարին 1930: 3) *Schiarimenti* բազրով երկու նամակներ, Հրատարակութեան տարին չորս վերնագրով հատորին մէջ չորս նամակներ: Հրատարակութեան տարին չորս 1900: Ուսումնասիրութեանս ամբողջացման ծառայեցին Ս. Ղազարի Դիւանէն անուիպ 39-40 նամակներ:
3. Թրանսիլվանիոյ Հայերուն՝ Հոռմի հետ կրօնական միութեան շարժումը սկսած է 1680ական թուականներուն, վերջար Եպիսկոպոսին նախաձեռնութեամբ (Հմմ. Արեւելեան Հայք ի Պուդոլինա, Վիեննա (Աղգ. Մատ. Հտ. Դ.) 1891, էջ 34, 122-124):

չատուր Վրդ. Թրանսիլվանիոյ իր առաքելութիւնը աւարտած, Սեպտեմբերի վերջերը վերադարձի ճամբան կը բռնէ¹¹: Իսկ Հ. Ղազար Վրդ. կ'ուղեւորի դէպի Պոլիս¹²:

Քննելիք հարցերը ծիսական ու դաւանական էին, որոնց մէջ կը ներկայացուէին ընդունելի եւ անընդունելի կէտեր:

Ընդունելի կէտերն էին՝ թէ Հայերը 1) իրենք զիրենք Հռոմէական կաթողիկէ կը կոչեն. 2) ջուր կը խառնեն պատարագի բաժակին մէջ. 3) Ս. Լեւոն Պապին անունը կը յիշեն՝ ըստ պատշաճի: Անընդունելի նկատուած կէտերն էին՝ թէ Հայերը 1) «հերետիկոսներուն» անուններն ալ կը յիշեն պատարագի ժամանակ. 2) Քրիստոսի Ծննդեան տօնը եւ Յայտնութիւնը մի եւ նոյն օրը կը կատարեն՝ հակառակ Փլորենտեան ժողովի կարգադրութեան. 3) առանձնաբար Քրիստոսի մէջ մէկ բնութիւն կը դաւանին. 4) անասուններով զոհեր կ'ընեն. 5) մանուկները կը հաղորդեն. 6) չեն մատակարարեր Վերջին Օծումը. 7) աղջիկները եկեղեցի չեն մտցներ. 8) հիւանդներու Ս. Հաղորդութիւն կը տանին՝ առանց մասնաւոր յարգանքի:

Խաչատուր Վրդ. Կերլայի մէջ

Ինչպէս Մխիթար Աբրահամ համակէն, նոյնպէս Տէր Մինասի նամակէն ալ կը տեղեկանանք՝ որ Խաչատուր Վրդ. իր հետը իբր ուղեկից ընկեր ունէր Մխիթար Աբրահամ աշակերտ Հ. Ղազար Վարդապետը, որ յաճախ «Հայր Գործակալ» տիտղոսով կը յիշատակուի¹³:

Առաքելներուն Պելլրատ հասնելու լուրը մեծ ուրախութիւն պատճառած է Հիմնադրիս¹⁴, մինչ Կերլայէն հասած առաջին լուրը, 1719 Սեպտ. 4 թուակիր – յետ չորս ամիսներու երկար լուրթեան – շատ մտահոգած է զինքը, մանաւանդ իմանալով ժանտախտի դոյժը՝ իրենց երթալիք դաւառներուն մէջ¹⁵:

11. Նամակ Խչտ. Վրդ. ի, Կերլայէն, առ Մխ. Աբ. Վենետիկ, 1719 Սեպտ. 4 (Դիւան Ս. Ղզ. Նմկ. Խչտ. Վրդ. ի):
12. Նամակ Հ. Ղազարի, Կերլայէն, առ Մխ. Աբ. Վենետիկ, 1719 Սեպտ. 3 (Դիւան Ս. Ղզ. ի): Տես նաեւ նամակ Մխ. Աբ. ի, Վենետիկէն, առ Հ. Ղազար, Պոլիս, 1719 Նոյ. 21, (Նմկ. Մխ. Աբ. թիւ 74):
13. Տե՛ս Ծանօթ թ. 7:
14. Պելլրատէն գրուած միայն Խաչատուր Վրդ. ի նամակը հասած է ձեռքերնիս (տես աստ, Ծանօթ. 10): Նոյն քաղաքէն Հ. Ղազար Վրդ. եւս գրած է նամակ մը, յայտնելով իր Կ. Պոլիս երթալու մտադրութիւնը (ըստ Մխիթար Աբրահամ մէկ նամակին, գրուած Վենետիկէն Պոլիս, առ Հ. Ղազար, 1719 Նոյ. 21 թուակիր. Նմկ. Մխ. Աբ. թ. 74): Հ. Ղազարի վերոյիշեալ նամակը կորսուած է: Իսկ Մխիթար Աբրահամ չափազանց տխրած է Հ. Ղազարի ինքնազուրկ Պոլիս երթալուն վրայ:
15. Նամակ Մխ. Աբ. ի, Վենետիկէն, առ Խաչատուր Վրդ. Պելլրատ, 1719 Հոկտ. 13 (Նմկ. Մխ. Աբ. թ. 70):



Եւասպ անձ, հանդիս ջուրը զեռուն շնչոց կենդանեաց:



Եւասպ անձ, արացուք մարդ ըստակերի մարմն:

Գ Ի Բ Ք Ե Ն Ն Կ Ո Յ

ՈՐ ԸՍՏ ԵՐՐԵՅԵՅԻՈՅՆ

ԸՍԲ ԲԻՐԷՍԻԹ

Գլխի Աշտնեղի



ԵՐԵՐ ԸՏ ԳԵՐԿԻՆ ԵՒ

ՋԵՐԿԻՐ ԵՒ ԵՐԿԻՐ ԵՐ ԵՆԵՐԵՒՈՅՆ

1. Եւասպ անձ, հանդիս ջուրը զեռուն շնչոց կենդանեաց:
2. Եւասպ անձ, արացուք մարդ ըստակերի մարմն:
3. Եւասպ անձ, հանդիս ջուրը զեռուն շնչոց կենդանեաց:
4. Եւասպ անձ, արացուք մարդ ըստակերի մարմն:
5. Եւասպ անձ, հանդիս ջուրը զեռուն շնչոց կենդանեաց:
6. Եւասպ անձ, արացուք մարդ ըստակերի մարմն:
7. Եւասպ անձ, հանդիս ջուրը զեռուն շնչոց կենդանեաց:
8. Եւասպ անձ, արացուք մարդ ըստակերի մարմն:
9. Եւասպ անձ, հանդիս ջուրը զեռուն շնչոց կենդանեաց:

Առաջին էջ Մխիթար Աբրահամ Աստուածաշունչին
Première page de la Bible de l'A. Mekhitar
(Վենետիկ – Venise, 1733, cm. 18×25 կրպ.)

Առաքեալները նորակառոյց Կերլան լաւ վիճակի մէջ կը գտնեն, իր շուրջ 200 հայ տուններով, հազարի չափ անձերէ բաղկացած¹⁶:

Հ. Ղազար Վրդ.ի համաձայն՝ պատահամբ դացած են Կերլա, առանց մասնաւոր դիտումի մը: Պելլրատի մէջ ծանօթացած խումբի մը ընկերանալով՝ հասած են մինչեւ Կերլա¹⁷: Ինչպէս կը տեսնուի, ինչպատուր Վրդ. իր նուրբ վարուելակերպով՝ նոյնիսկ իր ուղեկից ընկերոջ գուշակել տուած չէ իրենց յանձնուած կարեւոր առաքելութեան նպատակները:

Կերլայի բարեպաշտ հաւատացեալները մեծ սիրով կը կապուին երկու նորեկներուն հետ: Որքան որ արդէն ունէին տարիքոտ հովիւ մը՝ Տէր Ղազար Պուտախեան, որ անկողին ինկած էր, լայն ասպարէզ կը մնար մեր երկուքին դիմաց: Եւ յիրաւի, բարեպաշտ հաւատացեալները ոչ միայն կիրակի եւ տօնի օրեր, այլ շաբթուան լուր օրերն անգամ կու գային խոստովանանքի եւ հաղորդութեան: Բաժնուելու պահուն՝ շատ կը յուզուի ժողովուրդը, եւ միայն կը հանդարտի լսելով ինչպատուր Վրդ.ի խոստումը՝ թէ պիտի ջանայ մընայուն առաքեալներ ղրկել, Մխիթար Աբբաճօր աշակերտներէն, զիւրենք հովուելու եւ մխիթարելու համար¹⁸:

Կերլայի հաւատացեալներուն գոյգ խնդրագիրները

Դիւրին է հասկնալ, որ ինչպատուր Վրդ.ի եւ իր ընկերոջ նման քարոզիչներու ծանօթանալէն ետք, Կերլացիները պիտի չուշանային Թախանձագին խնդրագիրներ ներկայացնել Մխիթար Աբբաճօր:

Առաջին պաշտօնական նամակը 28 Սեպտեմբեր 1719 թուականը կը կրէ, ստորագրուած Կերլայի եկեղեցական ու քաղաքական անձնաւորութիւններէն, որոնք անձամբ յանձնած ըլլալու են ինչպատուր Վրդ.ին, որ իր կողմէ յանձնարարական մըն ալ աւելցնելով՝ փոխանցած է Մխիթար Աբբաճօր¹⁹:

16. Նամակ Հ. Ղազար Վ.ի (Հ. Գործակալին), Կերլայէն, առ Մխ. Աբ. Վենետիկ, 1719 Սեպտ. 3 (Դիւան Ս. Ղզ.): Սոյն նամակին մէջ կը վերահաստատէ Պելլրատէն ալ գրած ըլլալը:

17. Անդ:

18. Անդ:

19. «Մենք Կերլայ եղեալ քահանայ, եկեղեցրան եւ երկոտասան իշխանք քաղաքիս: Նախ եւ առաջ զարբազնեալ աջ քո համբուրեմք եւ վարդապետաց քոց: Խնդրեմք, զի զՔեզ եւ զքոյս Ամենազօրն անփորձ եւ անսառն պահիցէ ի փառս Աստուծոյ եւ յօգուտ մերազնեայց: Լուաք ի Վերապատուելի ինչպատուր Վարդապետէն, թէ վարդապետքն քո գնան առ Հայս առ ի քարոզել նոցա գիւնն Աստուծոյ եւ զհամարութիւն: Գոլով եւ մեք Հայք եւ որդիք ճշմարտութեան, դիմեմք առ քո բարեսիրութիւն, զի՝ որպէս ինչպատուր աստուածաբան Վարդապետն խոստացեալ է՝ զերկու վարդապետս քոյս արժանաւորիցիս չուտ

Թիւնը, որ միայն քարոզիչներու ներկայութեամբ կարելի էր կատարել: Իր այս փափաքը հաղորդած է — կը գրէ Եպիսկոպոսը — թէ՛ Հռոմի եւ թէ՛ Վիեննայի Նուիրակին, ուստի, Մխիթար Աբբահայր անվարան կրնար ղրկել իր աշակերտները²²:

Առաքելական յորդորներ

Դիտողութեան արժանի են Մխիթար Աբբահայր թելադրած ողջամիտ կանոնները, զոր կ'աւանդէր կատարուելիք առաքելութեան նըկատմամբ, աստուածաբանական, կրթական ու հովուական գործառնութեան տեսակէտներով: «Եւ ահա ելեալ գան առ ձեզ — կը գրէ Մխիթար Աբբահայր — եւ յուսամ զի լիապէս մխիթարեցեալք լինիք սոքօք, վասն զի կարողք են մխիթարելոյ զձեզ, եւ ուսուցանելոյ զաստուածային ճանապարհն եւ զճշմարտութիւն... եւ եւս կրթելոյ զմանկունս ձեր ի յուսումն գրոց եւ յերկիւղ Տեառն, ի վարժումն քրիստոնէականի վարդապետութեան եւ ի ջերմեռանդութիւն աստուածային սիրոյն»²³:

Ուղեւորութիւն Վենետիկէն Կերլա

1720ի Մայիս 14ին, Մխիթար Աբբահայր ընտրեալ երկու առաքեալները կը թողուն Ադրիականի ափունքները՝ Տոժերու վեհաշուք ուստանը, երթալու համար նախ Կայսերական քաղաքը՝ Վիեննա, անկէ՝ Պոլտա, ապա իրենց առաքելավայրը նշանակուած Կերլա հայաքաղաքը:

Վիեննա կը հասնին նոյն ամսուան 30ին, եւ Յունիս 1ին ունկընդորութիւն կ'ունենան Վիեննայի Պապական Նուիրակին մօտ²⁴: Կը յանձնեն Ս. Ժողովէն գրուած նամակը, որուն ընթերցումին վրայ՝ Միլանաւորը դիտել կու տայ թէ լաւ ըրած են իրեն գալով, որպէսզի Թրանսիլվանիոյ Եպիսկոպոսին ուղղուած յանձնարարական նամակ մըն ալ կարենար տալ՝ քանի որ անոր թեմին մէջ պիտի պաշտօնա-

22. Նամակ Մարթոնի Գէորգ Եպիսկոպոսի Թրանսիլվանիոյ, Ալպա Եուլիայէն, առ Մխ. Աբ. Վենետիկ, 1720 Մայիս 12 (Դիւան Ս. Ղզ.):

23. Տե՛ս Մանթ. Թ. 21:

24. «Յայտնի լիցի, զի այտի որ ելաք, էր Մայիս 14. եւ սոյն ամսոյն 30 հասաք խաղաղութեամբ ի նաւահանգիստն մեր առաջին եւ յոյժ գովելի Վենայ. կայսերական քաղաքի մէջիւմն, եւ օրն էր Եւ., ի տօնի Մարմնոյ եւ Արեան Տեառն: Որոնեցաք աստ, նախ զՊարոն Գէորգն, եւ ոչ կարացաք դտանել, զի զնացեալ էր ի Պելէկոստո: Հուսկ (յ)ետոյ որոնեալ գտաք գտուն Տիրացու Սահաթչի Գրիգորին, եւ եցոյց մեզ տեղի ի վարձու, եւ անդ ննջեմք մինչեւ որ Վեհափառ Նունցին գիրն մատուցանեմք, եւ ապա չուեմք աստի: Յոյս գոյ թէ ի մօտոյ աւուրս լինիցի, եթէ Տէր կամեսցի: Նամակ Տէր Յովնան Եպիսկոպոսին, Վիեննայէն, առ Մխ. Աբ. Վենետիկ, 1720 Յունիս 2 (Դիւան Ս. Ղզ.):

վարէին: Բայց Նուիրակը մէկի տեղ՝ երեք նամակ կու տայ ձեռքերնին. մէկը՝ Եպիսկոպոսին, երկրորդը՝ Կերլայի Թաղական Խորհուրդին ուղղուած, իսկ երրորդը՝ ճամբորդական յանձնարարական մը, դիւրացնելու համար իրենց ուղին՝ քաղաքէ քաղաք, գիւղակէ գիւղակ...:

Ճամբու ընթացքին բաւական նեղութիւններ կը կրեն, չունենալով բաւարար ծածկոց՝ կառքին մէջ՝ Ամէն պարագայի՝ Յունիսի վերջերը կը հասնին Կերլա եւ քանի մը օր կը հանգստանան²⁵:

Առաջին ձեռնարկները

Յովնան Եպ.ի եւ Հ. Մանուէլ Վրդ.ի առաջին գործը կ'ըլլայ ներկայանալ Կերլայի Թաղական Խորհուրդին, յանձնելու համար Վիեննայի Պապական Նուիրակին ու Մխիթար Աբբահայր պաշտօնական նամակները:

Տարակոյս չկայ, որ Կերլացիները մեծ ուրախութեամբ ու պատուասիրութեամբ կ'ընդունին զիրենք եւ կը յանձնուին անոնց կարգադրութիւններուն:

Երկու օր ետք, Տէր Մինասին հետ կ'երթան ի յարգանս Տէր Գէորգ Մարթոնի Թրանսիլվանիոյ լատին Եպիսկոպոսին, եւ կու տան յանձնարարական նամակը: Եպիսկոպոսը Տէր Յովնանը Փոխանորդ կը կարգէ՝ իր իշխանութեան տակ եղած բոլոր Հայերուն, արտօնուած թիւն տալով դրոշմի խորհուրդի մատակարարութեան, քահանաներ ձեռնադրելու եւ կառավարելու հաւատացեալները:

Դառնալով առօրեայ գործերուն, կ'անցնին քարոզչական ձեռնարկներու եւ ծիսական ինչ ինչ փոփոխութիւններ բերելու, հանդիսաւորութիւն տալու համար եկեղեցական արարողութիւններուն. Տէր Յովնան Եպս. ուղած է որ տղաքը թափօր կազմելով եւ զանգակ զարնելով հաւաքուին ու մտնեն եկեղեցի:

Նոյն ատենուան եկեղեցին շատ փոքրիկ մատուռ մըն էր, գերեզմանատան մօտը, հաւանաբար՝ այսօրուան մայր եկեղեցւոյ տեղը: Կերլայի այդ հոյակապ եկեղեցին հարիւր տարի ետք պիտի կառուցուի:

Երեկոյեան ժամերգութենէն առաջ, Հ. Մանուէլ Վրդ. որոշ օրեր, փոքրիկներուն քրիստոնէականի դասեր կու տար, եւ այնքան հաճելի ճճով, որ տղոց հետ ծերերն ու երիտասարդներն ալ կու գային եկեղեցի, եւ հոգեւոր ուրախութեամբ լեցուած կը դառնային իրենց տունները²⁶:

25. Նամակ Յովնան Եպս.ի, Կերլայէն, առ Մխ. Աբ. Վենետիկ, 1720 Յունիս 10 (Դիւան Ս. Ղզ.):

26. Ամդ:

Յովնան Եպիսկոպոսի վերադարձին, որպէսզի խնդիրները իրենց վերջնական լուծումը գտնեն⁴³:

Տէր Յովնան Եպիսկոպոս Պաշփալովէն Կերլա,
Կերլայէն վեցնետիկ կը դառնայ

Պաշփալովի փոքրիկ գիւղակին մէջ առանձնանալով Տէր Յովնան, առաջին շրջանին՝ անխռով, երկրորդ շրջանին՝ սրտնեղած դառն օրեր կ'անցընէ մինչեւ որ իր սիրելի վանքը կը վերադառնայ⁴⁴:

Իր դրածին համաձայն, արդէն հիւանդութեան միջոց առաջադրած էր դառնալ Մխիթար Աբրահամ հիմնած վանքը, եւ այդ տրամադրութիւնը պահած էր իր սրտին մէջ, ու միայն ժողովուրդին ըստիպման վրայ է որ չէր լքած առաքելութիւնը⁴⁵:

Արդարեւ, Մխիթար Աբրահամ Միաբանութեան հանդէպ բացառիկ էր իր խանդակաթ սէրը: Տարակոյս չեն վերցնել իր անկեղծ խօսքերը⁴⁶:

43. «Տէր Մինաս, որ աստ է, յառաջմէ կեղծաւորեալ ընդ մեզ սիրով կայր եւ մնայր. բայց այժմ նշոյլ նախանձու ծագեցուցեալ՝ դնայ եւ դայ Եպիսկոպոսի տեղւոյս, եւ զայս լուր երբ աստ, թէ Եպիսկոպոսն խոժոռեալ է ի վերայ Մօնսինէօրին (== Յովնան Եպիսկոպոսին) եւ ասացեալ գոյ այսպէս թէ. Ես թէպէտ գիր ետու նմա որպէս զիմ (յ)աջորդ եւ օգնիչ լինիցի՝ որպէս ետուրն իսկ՝ բայց յետոյ մտածեցայ, թէ զուցէ ոչ իցէ նա ձեռնադրեալ ճշմարիտ Եպիսկոպոս, եւ կամ դիցուք թէ Եպիսկոպոս իցէ, բայց կարէ լինիլ վասն իմիք պակասութեան արդեւեցեալ իցեն զինքն ի պաշտօնէ Եպիսկոպոսութեան: Ուրեմն՝ բերցէ ինձ զգիր վկայութեան, թէ է իսկ ճշմարիտ Եպիսկոպոս եւ կամ ոչ անկեալ ի ներքոյ իմիք կախման եւ այլ այսպիսիք: Զոր լուեալ Մեծամեծ տեղւոյն, սկսան խորխորալ, մխալ, եւ կամին թէ յառաջ հրաժարեցուցեն զՏէր Մինաս ի պաշտօնէ իւրմէ, ասելով թէ մեք գիտեմք զնորա չար սիրտն, որ նա զնացեալ ելից զսիրտ Եպիսկոպոսին. եթէ ոչ, նա խիստ լաւ եւ սրբապետաց մարդ է. եւ այլն: Բայց ես հանդարտեցուցի զնոսա ասելով. Համբերեցէ՛ք մինչեւ Մօնսինէօրն մեր դայցէ ի Պաշփալովու: Եւ նոքա հանդարտեցան: Եւ ես, որքան որ կարս է, սիրով վարվիմ ընդ Տէր Մինասու զի մի՛ նախանձն առաւելցի»: Նամակ Հ. Մանուէլ Վրդ. Կերլայէն, առ Մխ. Ար. Վենետիկ, 1720 Դեկտ. 11 (Դիւան Ս. Ղզ.):

44. Նամակ Յովնան Եպոս. Պաշփալովէն, առ Մխ. Ար. Վենետիկ, 1721 Մարտ 17 (Դիւան Ս. Ղզ.):

45. Նամակ Յովնան Եպոս. Պաշփալովէն, առ Մխ. Ար. Վենետիկ, 1722 Դեկտ. 23 (Դիւան Ս. Ղզ.):

46. «Խնդրեմ, զի անմեղադիր լիցիս, եւ որքան եմք կենդանի, միշտ պատրաստ եմք առ ի ծառայելոյ Միաբանութեան եւ հայցեմք զի զմեզ յիշել յազօթս ձեր մի՛ մոռանայցէք, որպէս եւ մեք յիշեմք ի յազօթս ձեր զՏէրութիւնդ եւ զընաւ միաբանսն թէ եւ իցեմք անարժանք»: Նամակ Յովնան Եպոս. Պաշփալովէն, առ Մխ. Ար. Վենետիկ, 1721 Մարտ 17 (Դիւան Ս. Ղզ.):

«Տարաձայնութիւն» Տէր Յովնան Եպիսկոպոսի
եւ Տէր Մինասի միջեւ

Ինչպէս կը նշմարուի վերոյիշեալ նամակներէն, ըլլայ Կերլայի, ըլլայ Պաշփալովի մէջ՝ օրէ օր աճած է հակակրօթիւնը ընդ մէջ ժողովրդապետ սահմանուած Տէր Մինասի եւ հիւր եկած Տէր Յովնան Եպիսկոպոսի:

Եպիսկոպոսը շատ վիրաւորիչ ու անարդար կը գտնէր որ Տէր Մինաս իշխել կ'ուզէր ժողովուրդին վրայ, նման տաճիկ բռնաւորներուն: Եպիսկոպոսին ըսածին համաձայն՝ Տէր Մինաս կը նախատէր հաւատացեալները, գաւազանով կը ձաղէր զանոնք, ու մինչեւ իսկ բանտարկութեան եւ տուրքերու կ'ենթարկէր⁴⁷:

Յետոյ՝ Տէր Մինասի նկարագրին մէջ անկեղծութեան պակաս կը նկատէր, եւ ձգտում՝ այցելուի եւ փոխանորդի պաշտօններու հասնելու⁴⁸:

Հուսկ՝ Յովնան Եպսկ. խորապէս վիրաւորիչ կը գտնէր յանդուգն վարմունքը Տէր Մինասի, որ մտադրած էր զինք հեռացնել այդ հայ համայնքէն:

Հ. Մանուէլ Վրդ. ի նամակներէն կ'իմանանք որ Տէր Մինաս նոյն-իսկ տարակուսած է Տէր Յովնանի Եպիսկոպոսական աստիճան ունենալուն⁴⁹: Արդարեւ, անհանդուրժելի կու դար Տէր Մինասին՝ որ Թրանսիլվանիոյ լատին Եպիսկոպոսն ալ Տէր Յովնանի կողմը կը բռնէր:

Օրերը կ'անցնէին, ու փոխանակ խաղաղելու տարաձայնութեան ցոյցերը, միշտ աւելի կը շեշտուէր երկու եկեղեցականներուն միջեւ դոյացած անհամաձայնութիւնը:

Ուստի, օրին մէկը, Տէր Յովնան Եպիսկոպոս պաշտօնապէս կը հաւաքէ բոլոր հասարակութիւնը, եւ ամէնուն առջեւ՝ զայրադին կը հանդիմանէ Տէր Մինասը՝ կը ստիպէ զինքը, որ ընդունի իր յանձնարմանէ Տէր Մինասը՝ կը ստիպէ այցելուի եւ փոխանորդի պաշտօններու ցանքները եւ մտքէն հանէ այցելուի եւ փոխանորդի պաշտօններու հասնիլ՝ որքան ատեն որ ինքը՝ Յովնան Եպոս. Թրանսիլվանիա կը մնայ: Իսկ Տէր Մինաս, հասարակաց առջեւ թողութիւն կը խնդրէ ու խոնարհաբար կը հրաժարի իր ձգտումներէն: Եպիսկոպոսը կը ջանայ Տէր Մինասը այն համոզումին բերել՝ թէ հարկաւոր գիտութիւն չունի ժողովուրդը ուղղափառութեամբ հովուելու⁵⁰:

47. Տէ'ս ծանօթ. Թ. 44:

48. Նամակ Յովնան Եպոս. Պաշփալովէն, առ Մխ. Ար. Վենետիկ, 1721 Մարտ 17 (Դիւան Ս. Ղզ.):

49. Տէ'ս ծանօթ. Թ. 43:

50. Նամակ Յովնան Եպոս. Կերլայէն, առ Մխ. Ար. Վենետիկ, 1721 Մարտ 30 (Դիւան Ս. Ղզ.):

Մխիթար Աբբահայր տեղեկացած էր «տարածայնութեան» ու մանաւանդ ուղղափառութեան հարցերու մասին՝ ո՛չ միայն Տէր Յովնան Եպիսկոպոսի եւ Հ. Մանուէլ Վրդ.ի նամակներէն, այլ նաեւ խաչատուր Վարդապետի պատմածներէն: Սակայն, ամիսներ անպատշաճ է, յուսալով որ դոյացած յուղումները հանդարտին: Հուսկ, յետ երկար համբերելու եւ խորհրդածելու՝ Մխիթար Աբբահայր կ'որոշէ ետ կանչել երկու առաքեալները եւ այսպէս վերջ տալ նորաբոյս առաքելութեան:

Որքան որ Մխիթար Աբբահայր իր պաշտօնական նամակներով⁵¹ «յանուն հնազանդութեան» վանք կանչած է Հ. Մանուէլ Վրդ.-ը, սակայն՝ իրականութեան մէջ՝ դեռ երկու տարի Հ. Մանուէլ Վրդ. Թրանսիլլանիա կը մնայ, մինչեւ որ 1723ին, Հոռոմէն կը հասնի՝ իր տեղը բռնելու համար՝ նոր «միսիոնար» մը, Պարոնեան Տէր Մինաս Վարդապետը: Մխիթար Աբբահայր ազնուօրէն Տէր Յովնան Եպիսկոպոսին բարեհաճութեան թողուցած է երկրէն հեռանալու հարցը⁵²:

Մինչ այն՝ Տէր Յովնան Եպիսկոպոսի խնդրանքին վրայ, Հ. Մանուէլ Վրդ.-ի համար, թէ՛ թեմական լատին Եպիսկոպոսին եւ թէ՛ Թաղական խորհուրդի անդամներու կողմէն վկայագիրներ կը պատրաստուին⁵³:

Գալով «տարածայնութեան» հարցին, Մխիթար Աբբահայր յայտնի կը տեսնէր որ երկու կողմերն ալ հաւասար իրաւունք ունենալ կը կարծէին, եւ կը ջանար համոզել Տէր Յովնան Եպիսկոպոսը՝ որ նկատի առնէր Տէր Մինասին ունեցած ժողովրդապետական իրաւունքները⁵⁴:

Իսկ «ուղղափառ» կամ «ոչ-ուղղափառ» խնդրին նկատմամբ, Մխիթար Աբբահայր կ'ուզէր շեշտել իրականութիւն մը՝ որ թերեւս Տէր Յովնան Եպիսկոպոսի աչքէն վրիպած էր. այն՝ թէ տեղացի ժողովուրդը թէեւ ուղղափառ էր քանի մը տասնեակ տարիներէ ի վեր, բայց տակաւին ուղղափառ չէր կոչուեր Աղգին մէջ: Մխիթար Աբբահայր, միւս կողմէն, Տէր Մինասին եւ անոր պէս խորհողներուն միտքը մեկնելով, կը համարէր թէ անոնք ջանք կը թափէին որ ա-

51. Նամակ Մխ. Աբ. Վենետիկէն առ Հ. Մանուէլ Վրդ. Կերլա, 1721 Մարտ 22 (Նմկ. Թ. 107), 1721 Ապրիլ 5 (Նմկ. Թ. 107դ). առ Յովնան Եպս. Կերլա, 1721 Յունիս 20 (Նմկ. Թ. 115). առ Հ. Մանուէլ Վրդ. Կերլա, 1721 Հոկտ. 27 (Նմկ. Թ. 123):

52. Նամակ Մխ. Աբ. Վենետիկէն, առ Յովնան Եպս. Կերլա, 1721 Մարտ 22 (Նմկ. Թ. 107բ):

53. Schiarimenti e Documenti 1695-1768, էջ 113, Թիւ 62, ստորագրուած Մարթոնի Գէորգ Եպս.էն, Ալպա Եուլիա, 1721 Յունիս 30:

54. Նամակ Մխ. Աբ. Վենետիկէն, առ Յովնան Եպս. Կերլա, 1721 Ապրիլ 5 (Նմկ. Թ. 108):

մէն տեսակէտով, ծէսով եւ սովորութիւններով՝ Հայերը նմանէին ուղղափառներուն⁵⁵:

Մխիթար Աբբահայր այս տեսակէտը շատ նուրբ հարց մը կը չօշափէ, որուն լուծման համար Ս. Ժողովն ինքնին հարկ զգացած է դիմել խաչատուր Վարդապետի ու Յովնան Եպիսկոպոսի տեղեկութիւններուն:

Մխիթար Աբբահայր շատ ցաւած ըլլալու է առաքելութեան փակումին համար, որուն հետեւանքները հաւատացեալները պիտի տուէր թէին⁵⁶: Տէր Յովնան Եպիսկոպոսին տահաճութիւնն ալ յայտնի է⁵⁷:

Յովնան Եպիսկոպոս, իր կարգին, 1721 Մայիս 22 Թուակիր նամակով մը կ'ուղէ հանդարտեցնել Մխիթար Աբբահայրը՝ որ մտածուէր չըլլայ իր կրած հակադրութիւններուն համար, եւ չկարծէ թէ հոգ չըլլայ իր կրած հակադրութիւններուն համար, եւ տարածայնութեան Տէր Մինաս կրնայ կլլել զինքը՝ որպէս մօեղ, եւ տարածայնութեան հետեւանքով ինքը այնքան վնասուի⁵⁸:

Իրականութեան մէջ, Յովնան Եպիսկոպոս կրցած է փակել Տէր Մինասի բերանը եւ խոնարհեցնել անոր ամբարտաւանութիւնը:

Դաւանական տեսակէտով ալ, հանդարտեցնելու համար Մխիթար Դաւանական տեսակէտով ալ, հանդարտեցնելու համար Մխիթար Աբբահայրը, կը յիշատակէ որ թէ՛ Պաշտօնովի եւ թէ՛ Կերլայի Ժողովուրդը իսկապէս ուղղափառ է: Նամակէն յայտնի կ'ըլլայ որ Տէր Յովնան Եպիսկոպոս դիմում կատարած է Հոռոմի Ս. Ժողովին ու Յովնան Եպիսկոպոս դիմում կատարած է հաւատքի անադրական պատասխան առած է հաւատացեալներու պահանջանքներուն մասին: Իսկ աղգային սովորութիւններու պահանջանքներուն (պահքեր եւ տօնակատարութիւններ), թոյլտուութիւն տեսակէտէն (պահքեր եւ տօնակատարութիւններ), թոյլտուութիւն տեսակէտէն (պահքեր եւ տօնակատարութիւններ) կարենան հետեւիլ⁵⁹: ստացած է որ անոնք մասնաւոր տօնացոյցի կարենան հետեւիլ:

Վերջին գործառնութիւններն ու վերադարձ

Տէր Յովնան Եպիսկոպոսի մեկնումէն առաջ, ի ներկայութեան Կերլայի, Պաշտօնովի, եւ այս անգամ նաեւ Ճուրճովի եւ Սեփիլիի համայնքներու պատուիրակներուն, թեմական լատին Եպիսկոպոսը ժողով մը կը գումարէ, վերատեսնելու համար Տէր Մինասի դործունէութիւնը: Նկատելով որ իր լսածներուն համաձայն դատած էր նաեւ Հոռոմ՝ պաշտօնանկ կը յայտարարէ Տէր Մինասը: Իսկ անոր

55. Անդ:

56. Նամակ Յովնան Եպս.ի Կերլայէն առ Մխ. Աբ. 1721 Յունիս 16 (Դիւան Ս. Ղզ.), Նամակ խաչատուր Վրդ.ի Վենետիկէն, առ Կարդ. Սակրիբանտ, 1720 Ապրիլ 6 (Դիւան Ս. Ղզ.), Նամականի խաչ. Վրդ.ի):

57. Նամակ Յովնան Եպս.ի Կերլայէն, առ Մխ. Աբ. Վենետիկ, 1721 Մարտ 30 (Դիւան Ս. Ղզ.):

58. Նամակ Յովնան Եպս.ի Կերլայէն, առ Մխ. Աբ. Վենետիկ, 1721 Մայիս 22 (Դիւան Ս. Ղզ.):

59. Անդ:

Այսպես, Հ. Մանուէլ Վրդ. 1723ի Յուլիա 5ին կը հասնի Վենետիկ, երեք տարուան բացակայութենէ ետք, եւ ջերմ ընդունելութիւն կը գտնէ բոլոր Միաբաններուն կողմէ⁹²:

Նախախնամութիւնը կրկին պիտի վերադարձնէ զինք, վեց տարի ետք, 1729ին, Պաշտօնով մնալու համար մինչեւ 1736 թուականը:

Այս յաջորդ շրջանին մասին, որ Միսիթարեան Միաբանութեան առաքելական պատմութեան աւելի բեղուն մէկ հանդրուանը պիտի կազմէ, ուրիշ առիթով պիտի անդրադառնանք:

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջացնելու համար մեր քաղած տեղեկութիւնները, պիտի ուզէինք նկատել տալ քանի մը կէտեր, որոնք ժամանակագրական տրւեալները ուսումնասիրած ատեննիրա՝ անուղղակի ջանացած ենք ճշտել, եւ կարեւոր կը համարինք վերամփոփել՝ մեր տեսած շրջաններու պատմական ստուգութեան համար:

1) Լուքաչի Քրիստափոր (Խաչատուր) անունով հռոմէական Վարդապետը, զուգէ միակ պատմաբանը Թրանսիլանիոյ Հայոց Պատմութեան, լատիներէն լեզուով իր գրած պատմութեան մէջ (1859), տեղեակ է Խաչատուր Վարդապետի կատարած այցելութեան՝ Թրանսիլանիոյ Հայոց, ձեռքին տակ չունենալով մեր տեսած գիւնական վաւերացութիւնը: Շատ քիչ բան գրած է Յովնան Եպիսկոպոսի գործունէութեան մասին, որ իսկապէս կարեւոր միջամտութիւն մը ունեցած է՝ պատմական տեսակէտով:

2) Ս. Ղազարու վանքի ժամանակագրութեան տուեալները, ինչպէս վերը ակնարկեցինք, Տէր Յովնան Եպիսկոպոսին առաքելական գործունէութիւնը վեց ամիս միայն նշանակած են՝ Թրանսիլանիոյ մէջ. մինչ իրականին մէջ՝ անիկա տարիէն աւելի գործած է այդ երկրին մէջ: Նոյն անձնութիւնը որդեգրած են այդ աղբիւրէն օգտուողները:

3) Գերպ. Գրիգոր Վրդ. Գովրիկեան կը շփոթէ Հ. Մանուէլ Վրդ.՝ Տէր Մինաս Թորոսեանի հետ, եւ այս վերջինն ալ՝ Տէր Մինաս Պարոնեանի հետ:

Միսիթար Աբրահայր, Կերլայիներու փափաքին վրայ՝ Հ. Մանուէլ Վրդ.՝ զրկած է 1720ին, եւ ոչ թէ Տէր Մինասը, որուն մասին հաղիւ ծանօթութիւն ունէր: Իսկ 1722ին, ոչ թէ Տէր Մինաս Թորոս-

եանը, այլ Տէր Մինաս Վրդ. Պարոնեանն է որ Թրանսիլանիա դաշած է իրր առաքեալ, Հռոմէն:

Գովրիկեան է անդրադարձած նաեւ որ մէջբերած նամակին մէջ (1729էն), Հ. Մանուէլ Վրդ.՝ առաքելութեան շրջանը արդէն իսկ աւարտած կը յիշատակուի, եւ յիշեալ Հայրը երկրորդ անգամ կը զրկուի Թրանսիլանիա՝ 1729ին:

4) Ինչ որ կը վերաբերի դաւանական հարցերուն, ճշտելու ենք Թրանսիլանիոյ Եպիսկոպոսարանին յստակ դերքն ու կեցութիւնը: Տեղացի Թեմականը «լատինացման» բռնն պայքար մղած է Հայոց դէմ, մանաւանդ թէ որոշ չափով զիջող եղած է անոնց հանդէպ: Ուստի, Լուքաչիի կարծիքը՝ թէ լատինները շարունակ ճնշած ըլլան Հայերը, բոլորովին ճշգրիտ չի թուիր, դոնէ մեր ուսումնասիրած Հայերը, բոլորովին ճշգրիտ չի թուիր, դոնէ մեր ուսումնասիրած շրջանին համար: Հռոմի միջամտութիւնը՝ դաւանական հարցերուն մէջ, զուգէ աւելի Տէր Մինաս Թորոսեանի եռանդին ու ճիգին չափազանցութեան վերադրելու ենք: Միսիթար Աբրահայր եւ իր գործակից առաքեալները, որպէս միութենական շարժման ռազմավարներ, անդու պաշտպան կանգնած կը թուին Հայկական աւանդութիւններուն եւ ծէսին անաղարտ պահպանման, զգուշանալով հեռու պահել մեր ժողովուրդը լատինացումի ձուլիչ հոսանքէն:

Հ. ՂՈՒԿԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

92. Նամակ Մի. Ար. Վենետիկէն, առ Մինաս Վրդ. Պարոնեան, Պաշտօնով, 1723 Յուլիա 16 (Նմկ. թ. 162):